167 Հիսուս բարեկամս է,

1. Հիսուս բարեկամս է,
Իմ ձեռքերս կբռնե,
Կառաջնորդե հանգիստ տեղեր,
Նա մշտապես քովս է:
Կառաջնորդե ամեն օր
Բարիքներով նորանոր,
Ապահով կուղղե ճամփաս
Դեպի փառքը երկնավոր:

2. Հիսուս հոգվույս Փրկիչն է,
Զիս մեղքերես կմաքրե,
Կլվանա Իր արյունով,
Սիրտս սիրով կլեցնե:
Կլեցնե Իր սիրով,
Սուրբ Հոգու պտուղներով,
Կուրախացնե իմ հոգին
Իր սիրո խոստումներով:

3. Հիսուս հավետ իմ Տերս է,
Զիս այստեղէն կտանե:
Հավիտյան Իր հետ պիտ ապրիմ,
Ես Անորն եմ, Ան իմս է:
Պիտի ապրիմ երկնքում
Հավիտյան՝ Աստծո գրկում,
Ան արցունքս կսրբե
Եվ կուտա հանգստություն: